Փիրչէնքը ինձ համար առանձնայատուկ նշանակութիւն ունեցող վայր է: Քանի որ այստեղի հայերի շնորհիւ եմ սովորել Սասունոյ բարբառը: Այո, լինելով սասունցու թոռ եւ կրթութիւն ստանալով Հայաստանում, միայն Սասուն գնալուց յետոյ կարողացայ սովորել մեր բարբառը: Քանի որ նրանք ստեղծեցին իմ կեանքում այն իրավիճակը, որպէսզի ուղած չուղած սկսեմ խօսել «մըր լեզուով»: Գիւղի սարեցները, որոնք բոլորն էլ գեռ յիշում էին իրենց ծնողներից ժառանգած հայերէնը մշտապէս բողոքում էին, թէ երբ հայկական ուստի՛ են միացրել ոչինչ չի հասկացուել, եւ առհասարակ, «իրենց հայերէնն» աւելի անուշ է: Քանի որ ես չէի կարողանում խօսել Սասունոյ բարբառով, իսկ իրենք էլ չէին կարող շփուել իմ իմացած հայերէնով, այնպէս էր ստացւում, որ ճակատագրի հեղնանքով մեր շփումն աւելի հեշտ էր դառնում, եթէ երկու կողմն էլ պարզապէս թուրքերէն խօսէր: Սակայն սրա հետ էլ չէին հաշտում Փիրչէնքի հայերը. «Ե՛, լիգուս չի դառնայ քըզի հետ թուրքչա խօսիմ լա՛օ»: Արդիւնքում Հայաստան վերադառնալուն պէս ես մէկ տարուայ ընթացքում ինտիր դրեցի իմ առջեւ ամէն օր վերընթերցելով էպոս սովորել Սասունոյ բարբառն ու ետ վերադառնալ Սասուն՝ հատ-հատ հաւաքելու այն բոլոր պատմութիւններն ու անգին մշակոյթը, որն ինձ անհասանելի էր լեզուական խոչընդուռի պատճառով:

Դէպի Փիրչէնք ճանապարհը երկար ու չափազանց վատն է: Ցանկացած մեքենայ երկու տարուց աւել չի կարող դիմանալ Սասունի լեռնային ճանապարհներին: Մէկ ժամ անց միայն յաջողւում է հասնել Փիրչէնք, մեքենան կանգնում է գիւղի մուտքի մօտ (հայկական թաղամասի մօտ հասնող մեքենայի ճանապարհ չկայ): Ամէն անգամ, երբ չուկա-



յից մեքենաները ապրանք են բերում գիւղացիներին, վերջիններս գնումները տուն հայցնելու համար անցնում են այս սարսափելի ճանապարհը՝ հսկայական պարկերը մէջքներին շալակած:

Փարերի վրայով մագլցելով՝ համում ենք Հարուն հօրեղօր տուն, վերջինս, թուրքերէն բղաւելով, անմիջապէս կանչում է փոքր աղջկան. «Այշէ՛, արագացրո՛ւ, հա՛ց դիր, այն հաւը հանի՛ր, ամէն օր Հայաստանից հիւր չի գալիս, պղղուրի վիւալ էլ կը սարքես, արագացրո՛ւ»:

Հարունի ամենափոքր աղջկէլ միակն է, որ մնացել է գիւղում հօր եւ մօր հետ: Անհամեր սպասում է, թէ երբ են գնալու Սթամպուլ. «Այս տարի եկայ, ասացի՝ ձմեռը մնամ մերոնց կողքին: Կեանքիս ամենավատ ձմեռն ապրեցի: Երկու մեթր ձիւն է գալիս սարերում, ելեկարականութիւնը կարուել էր մէկ ամիս: Բաղնիք գնալիս թոքաբորբով հիւրանդացայ: Այս խուլ վայրում մինչեւ Մայիս ամիս սպասել ենք, որ ճանապարհ բացուի: Վեց ամիս մեքենայ չէր անցնում այստեղով, աշխարհից կտրուեցինք»:

Սենեակի մի անկիւնում նստած է Հարունի կինը, որ լուռ լսում է աղջկայ պատմածներն ու հայեացքը ինձ դարձնելով՝ կամացուկ ասում: «Այդպէս էլ չսիրեցի այդ Սթամպուլը»:

Հենց այդ պահին յիշեցի Հրանուշ տատիկին, տեսնես՝ ուր է, չի երեւում:

«Հաւի ճտերի ետեւից է ընկել, չգիտե՞ս ջուոյին, հանգիստ չունի՛»:

Հրանուշը՝ Հառոն, 97 տարեկան է: Ի տարբերութիւն

Միա լոր կը հովանաւորեմ Մ. և Ա. Շեռն և Ֆրու Պինկենալ



*Հրանու տատիկը իր տաճ թռնիկա առջեւ*

Հարուն հօրեղբօր եւ իր կնոջ՝ ո՞չ երեխաները, ո՞չ թռուները երբեք չկարողացան իր վրայ ազդեցութիւն ունենալ գիւղը լքելու հարցում։ Զոչո Հառոն անդրդուելի է տասնամեակներ շարունակ։ Սասունից բացի ոչ մի տեղ չի կարող ապրել։ Սերուների այս հակամարտութեան մէջ Զոչո Հառոն առայժմ միակն է, որ յաղթանակ է տարել։ Աղջկները, տղաներն ու հարսները նրան մենակ չխողնելու համար ստիպուած ամէն տարի հերթափոխով գալիս ու մնում են գիւղում։ Հրանուշի կողքին ու վարում տնտեսութիւնը։

Ահա են նաև կենսուրախի, աչքերը փայլով լցուն, ուշադիր, ամէն կողմը զննող եւ միշտ շարժման մէջ գտնուող սիրելի Զոչօ Հառոն։ Իր մէջ նա ապրեցնում է այն ամէնն, ինչ ունեցել է Սասունը 1915 թ.-ից ի վեր՝ բոլոր ցաւերը, բոլոր կորուստներն ու այդ ամէնի հետ մէկտեղ անսահման սէր ու կեանք, ամէն բան կայ նրա մէջ։ Այնքան երջանիկ է, այնքան կենսուրախի, քանի որ այլեւս ոչ ոք չի համոզում, որ դնայ Սթամպուլ, ոչ ոք այլեւս չի վիճում իր հետ այդ մասին ու նա էլ այլեւս չի վախենում, որ օտար հողում կը մահանայ կամ կը թաղուի։

Հրանուշը, որ տեսել է իր ութերեխաներից երեքի իսլամացումը, թաղել է ամուսնուն, եղբայրներին ու որդիներից մէկին, երբեք այս ամէնի ելքը չի փնտոել Սասունից գուրս գնալու մէջ: Երբեմն միայն բարկացած պատմում է. «Հայերու Փարման, օր էղաւ Փարման, հայերուն կտրեցին: Գացին, Փարման էղաւ, հայեր գացին, լա՞ո»: (Երբ եղաւ հայերի մասին սուլթանի հրամանը, հայերին մորթեցին: Գնացին, սուլ-

թանի հրաման եղաւ, հայերը դնացին, զաւակս):

Ճոշ Հառոն այն եզակիներից է, որ իր բարկութիւնն ուղղում է ոչ միայն ցեղասպաններին, այլև հենց Հայերին. «Բա իիս իմա՞ս՝ մատի, լա՞օ» (Իսկ ես ինչպէ՞ս մնացի):

Մեր կողքին է սատում Հրանուշ տատիկի կրտսեր որդին  
ու թուրքերէնով ասում. «Այ իրենք են մեղաւոր (ցոյց է տա-  
լիս իր մօրը): Այ ես հիմա որ հայերէն նորմալ չեմ խօսում,  
իրենց մեղքն է, այսինքն՝ մեծերի: Մայրս մի քիչ շատ հայե-  
րէն խօսէր, մեծերն աւելի շատ խօսէին: Հարցնում եմ, թէ ին-  
չու մեզ հետ հայերէն չխօսեցիք: Ասում է՝ ոչ ոք այլեւս չէր  
խօսում, մենք էլ չխօսեցինք: Ու այդպէս սերունդը գնում է,  
բա, աղջիկս»:

Կողքից մեր խօսակցութեանն է միանում հարեւան ԱՀ-մետը ու իր պապից սովորած հայերէնով աւելացնում. «Հա՛, գինաս, իսա Ձոչօ Հառոն օր կա յա, իսա առաջ հիշ արաբի չխօսիր, մինադ հայերէն: Ամա... Էսմալ էղաւ, լա՛օ, բա» (Գիտես, այս Ձոչօ Հառոն որ կայ, սա Նախկինում երթեք արաբերէն չէր խօսում, միայն հայերէն: Բայց, Այսպէս եղաւ, զաւակս, բա):

Հրանուշ տատիկը լուռ լսում է իրեն ուղղուած մեղադրանքներն ու լուռմ, երբեմն նայելով մեզ՝ նորից ժպտում է: Ինքն այսօր ուրախ է եւ չի ցանկանում պատմել, որ հայերէն երեխանների հետ չի խօսել, որ դրսում ուրիշների հետ չխօսեն՝ գլխներին մի փորձանք չդայ: Շտապում ենք փոխել տխուր թեման եւ բացում ենք նույիրների տոպրակը.

- Քըզի լաչակ բերել իմ, Զոչօ՛ (Քեզ լաչակ եմ բերել,

Այս էղ կը հովանառութեա Ալ և Ալ Վրդու և Շնորի Թիգրան

# COME HEAR WHAT YOU HAVE BEEN MISSING



hearing aid source



TRY HEARING AIDS  
**RISK-FREE**

Call 416 754-4327



699 Coxwell Avenue  
Toronto, ON M4C 3C1  
Tel: 416 463-4327(HEAR)

Parkway Mall, 85 Ellesmere Road,  
#65 Toronto, ON, M1R 4B9  
Tel: 416 754-4327(HEAR)

[www.hearingaidsource.ca](http://www.hearingaidsource.ca)

- Free Hearing Tests
- No obligation Hearing Aid Trial
- Hearing Protection

Images copyright Otocon Canada Ltd.



## hearing aid source

*invisible, custom & comfortable*



Սասուն. Հազգօղիսը հայուհի Անին եւ իր զարմիկ Եփրատը կը հիւրասիրեն:

**Ձռչօ:**

- Ասա՞... Յիս 97 տարեկան իմ, լա՛օ, ընձի էնմալ լաշակ տու, որ 50 տարեկանի պէս էղնիմ (Ես 97 տարեկան եմ, զաւակս, ինձ այնպիսի լաշակ տուր, որ 50 տարեկանի պէս լինեմ):

Փիրշէնք գիւղից վերեւ ընկած է Օթնակ եալլան, որտեղ ամրանն իրենց կենդանիներն են արածեցնում բազմաթիւ իսլամացած հայ ընտանիքներ: Հենց այստեղ՝ Մարաթուկ լերան ստորոտին, նրանք առանց եկեկտրականութեան եւ տարրական պայմանների ամիսներ շարունակ աճեցնում են այժեր ու գառներ, որոնց ամէն տարի Յուլիսի վերջին գոհաբերում են Մարաթուկի Սուլբ Աստուածածին վանքի համար: Մարաթուկին նուրիուած ուխտագնացութեանը Սասունում պատրաստում են ամբողջ տարի: Մարաթուկի բարձունքը յաղթահարելուց եւ մոմավառութիւնից յետոյ եալլայում սկսում են տօնախմբութիւնները. վրանների ներսում եփուում է մատաղը, իսկ դրսում մինչ գիշեր չեն դադարում սասունցիական երգն ու պարը: Խոլամացած հայերը Սասունում պատմում են, որ նախկինում աւելի մեծ շուքով են նշել Մարաթուկի տօնը. չորս օր եւ չորս գիշեր տօնել են: Հիմա արդէն գիւղից քաղաք գաղթի պատճառով ամէն ինչ աւելի փոքրածաւալ է, քան նախկինում. երիտասարդները քիչ են: Սակայն շատերն, այնուամենայնիւ, ամրանը վերադառնում են գիւղ՝ հող մշակելու եւ Մարաթուկի ուխտն իրականացնելու:

Երեկոյեան, երբ բոլոր վրաններում մոմի լոյսերը յանգել են, բոլորը տոշակները փոռում են գետնին եւ արագ տեղաւորում իւրաքանչիւրը վրանի մի անկիւնում՝ վերմակնե-

րը գլխներին քաշելով, որպէսզի մկներն ու օձերը գիշերը չյարձակուեն: Ձոչո Հառոյի որդիներից մէկը երբեք չի քնում առանց աղօթելու: Մօտ հինգ րոպէէ ցածրաձայն աղօթելուց յետոյ բոլորին խաղաղ քուն է մաղթում Քրիստոսի անունով եւ խաչակնքում:

Եոյն վայրկեանին կողքի վրանում իր երեկոյեան նամազն է աւարտում նրա հարազատ քոյրը:

Սասունցի հայերի համար վաղուց սովորական դարձած տեսարան է:

Ընտանիքի ներսում քրիստոնեաների եւ մահմետականների միաժամանակեայ գոյութիւնը բնաւ տարօրինակ չի դիտում արդէն շատ վաղուց:

Սասունցիների գէպքում բոնի կրօնափոխութեան քաղաքականութիւնը որոց չափով յաջողութեան հասաւ միայն 1970-80-ական թթ.-ին, այն էլ՝ մասսամբ: Յաճախ բնտանիքի ներսում մէկ-երկուը կրօնափոխութիւնը՝ մնում էին գիւղում, իսկ ընտանիքի մնացած անդամները դաղթում Սթամպուլ ու միանում քրիստոնեայ հայ համայնքին: Այսինքն՝ յաճախ գիւղի հայրական տունը չկորցնելու համար ընտանիքից որեւէ մէկին «զոհ» են տուել, իսկ մնացածները, կրօնը պահպանելով, հեռացել են:

Ոմանք, ճնշումներին տեղի տալով, ճեւականօրէն կրօնափոխում էին, սակայն շարունակում միմիանց մէջ կազմակերպել ներհամայնական ամուսնութիւններ: Պատահում էր նաեւ, որ անգրագիտութիւնից ելնելով եւ իմամների քարոզ-չութեանը խաբուելով, որոշ հայեր համաձայնում էին թլբա-

**Միա լըր կը հովանաւորեմ Դուքն, Շամք եւ Անուան Սունացերեան**



# AUTOMOBILES INTER-LUX INC.

CENTRE DE CARROSSERIE ET PEINTURE  
VOITURES D'HAUTE GAMME



VENEZ VISITER NOTRE NOUVEL EMPLACEMENT !

---

**[www.interlux.ca](http://www.interlux.ca)**

---

2025, RUE MONTEREY LAVAL, QUEBEC H7L 3T6 MTL: 514-394-1162

տել իրենց երեխաներին, իսկ միւսները յամառօրէն չէին շեղ-  
ւում քրիստոնէական աւանդոյթներից:

Յաճախ նաեւ քրիստոնեայ հայերը աղջիկներին ամուս-  
նացրել են մահմետական հայ երիտասարդների հետ՝ անտեսե-  
լով կրօնական արգելքները. «Կարեւորը՝ մերոնցից է»: Ար-  
դիւնքում ժամանակի ընթացքում այս աղջիկները նոյնպէս  
ստիպուած էին մահմետական կենսակերպի անցնել, ինչպէս  
փեսայի ընտանիքը:

Ի վերջոյ ստացուել է այնպէս, որ Սասունում գրեթէ բո-  
լոր հայ ընտանիքներն ունեն ե՛ւ մահմետական, ե՛ւ քրիս-  
տոնեայ ազգականներ միաժամանակ:

Հետաքրքիր է, որ բոնի մահմետականութեան ընթացքը  
կանխել է ներընտանեկան ճնշումներն այն առումով, որ իս-  
լամ ընդունողները մեծ քննադատութեան են ենթարկուել  
քրիստոնեայ ազգականների կողմից: Վստահաբար՝ եթէ չի-  
նէին այս ներընտանեկան ճնշումները, իսլամացածների թիւը  
Սասունում աւելի շատ կը լինէր: Հետաքրքիր է, որ այսօր էլ  
իսլամացած քրիստոնեայ սասունցիները չեն կտրում ազգակ-  
ցական կապերը եւ շարունակում են պահել բարեկամական  
կապը եւ միմիանց կողքին լինել հարսանիքներին, թաղում-  
ներին: Թէ՛ մահմետական, թէ՛ քրիստոնէական տօներին  
նրանք պարզապէս չեն կարող չչնորհաւորել իրար:

Սասունցիների գէպքում իրաւացի կը լինենք ասել, որ  
հենց նրանց աւանդապաշտութիւնն ու նահապետական կեն-  
սակերպն են փրկել վերջիններիս ցեղասպանուելուց: Ֆիզի-  
քական փրկութիւնից յետոյ սասունցիների համայնքային  
ինքնութիւնը պահպանուել է շնորհիւ ներհամայնական, էն-  
դոգեմիկ ամուսնութիւնների ու ընտանեկան կապերի: Նրանք  
անդամ տասը տարեկան աղջիկներին ամուսնացնում էին յա-  
նուն այն բանի, որպէսզի մեծանալուն եւ գեղեցկանալուն  
պէս քրտերի կամ արաբների կողմից չփախցուեն: Խրաքան-  
չիւր հայ աղջիկ Սասունում պարտաւոր էր, թէկուզ հակառակ  
իր կամքի, փոքր տարեկից դառնալ հայ ընտանիքի հարս եւ  
ունենալ որքան հնարաւոր է շատ երեխաներ:


Այս բոլոր դաժան փորձութիւնները ինքնապահան-



Սասուն քաղաք

ման այն գինն էին, որ պիտի վճարէին տեղի հայերը: Այսօր  
արդէն քաղաքում կրթութիւն ստացող ու աւելի ազատ կեն-  
սակերպ վարող իրենց երեխաներին հետեւող տարեց սասունցի  
կանայք ինչպէս մի հեքիաթ են վերյիշում իրենց վերապրած-  
ները. «Հարսանիքիս օրը ծնկներս ու բերանս վէրքի մէջ էին,  
փոքր էի, բակում խաղալուց վնասել էի, 12 տարեկան էի»: Թէ  
ինչպիսի մարդկային տրամայ են վերապրել այս կանայք այդ  
տարիներին, հասկացայ մի օր Սթամպուլում ընթրիքի սեղանի  
շուրջ Սասունի Կուսգետ գիւղից եկած հայ կնոջ բառերից յե-  
տոյ. «Պոլիս էկանք, թուրքչա չըմ գինը, փողոց չըմ գինը...  
Կ'երթայինք, մըզի գործ չէին տայ, կորսուէինք հսխամպուլի  
փողոցներուն, ետ կը դառնայինք տուն: Մէ գէյթին չորս  
փարչա ըրինք կերանք լա՞օ: Ըմ պապ մեռաւ, ուր ինկեր էկաւ  
ընձի հարս տարաւ, օր եթիմ չմնամ: Ինը տարեկան, հա...  
Պղփիկ, մինուճար, Աստուած Քրիստոս էղաւ մըզի տէր: Է՛  
լա՛օ... Հա, լա՛օ, ինչ տի ըսէի քըզի... Հա, ըդ սիր (սէր) իմալ  
բան ա, գինա՞ս: Ընձի լը ըսա ինչ կեղնի, սիր օր կ'ըսեն իդա  
ի՞նչ »: (Եկանք Կ. Պոլիս, թուրքերէն չգիտեմ, փողոց չգիտեմ:  
Գնում էինք, մեզ գործ չէին տալիս, մոլորւում էինք Սթամ-  
պուլի փողոցներում, ետ էինք վերապառնում տուն: Մէկ ձի-  
թապտուզը չորս մասի էինք բաժանում, ուտում էինք, զա-  
ւակս: Իմ հայրիկը մահացաւ, իր ընկերը եկաւ ինձ հարս տա-  
րաւ, որպէսզի որը չմնամ: Ինը տարեկան էի: Փոքր, մինու-  
ճար, Աստուած Քրիստոս եղաւ մեզ տէր: Է՛, զաւակս: Հա՛,  
զաւակս, ինչ պէտք է ասէի քեզ: Հա, այդ սէրը, ինչպիսի բան  
է, գիտե՞ս: Ինձ էլ ասա ինչ կը լինի, որ ասում են սէր դա  
ի՞նչ է:»:

Սոֆիա Յակոբեան



*Այս էջը կը հովանաւորեն Ա. և Ա. Կարո և Խաչի Պահապետան*



# AQUABLU

STYLE DE VIE RIVERAIN  
SAINTE-DOROTHÉE

PUR LUXE.  
INCOMPARABLE.



À PARTIR DE 579 000\$ | OCCUPATION 2016

[CONDOSAQUABLU.COM](http://CONDOSAQUABLU.COM) 514.654.AQUA (2782)

GROUPE GARABEDIAN LIFESTYLE | RELIANCE CONSTRUCTION

# «Թուրքիայում հայ լինել նշանակում է՝ ցաւը մեղը դարձնել, եւ ես երբեք չեմ հրաժարուի այդ մեղից...»

## Իսլամացած հայերը՝

### Հայաստանի եւ հայութեան մասին

2015 թուականի Օգոստոսի 2-11 գանատահայ դաշնակահար, բարերար Ռաֆֆի Պետրոսեանի հովանաւորութեամբ Սփիտքի նախարարութեան «Արի տուն» ծրագրի նրա փուլին մասնակցեցին նաեւ շուրջ 85 իսլամացած հայեր, ովքեր ժամանել էին Տիրապետիք, Տերսիմից, Սասունից եւ Խոպայից (Երևանի Թուրքիայի Արդուին նահանգում գտնուող Խոպա քաղաքն ու գաւառը հոծ կերպով բնակեցուած են մահմետական համշենահայերով):

Ռաֆֆի Պետրոսեանի կողմից «Վերածնունդ» անուանուած սոյն նախագծի նպատակն է ապահովել իսլամացած հայերի վերադարձն իրենց արմատներին եւ նրանց ծանօթացնել հայկական մշակոյքի եւ հայաստանցիների հետ:

Ցիշեցնենք, որ 2014 թուականի Օգոստոսին եւս, դարձեալ Ռաֆֆի Պետրոսեանի հովանաւորութեամբ, «Արի տուն» ծրագրին մասնակցել էին 48 տիրապետիքից հայեր: Սակայն այս անգամ իսլամացած հայերը տարբեր շրջաններից էին, եւ նրանց մէջ կային նաեւ 8 համշենահայեր:

Իսլամացած հայերի խմբի անդամների մեծ մասն առաջին անգամ էր եկել Հայաստան: Կարեւոր էր նաեւ, որ այս տարի նրանց այցը ոչ պատահականորեն համընկալ Վեցերորդ ամառային համահայկական խաղերի օրերի հետ:

Նրանք, ծրագրի համաձայն, այցելեցին Օշական՝ Սուրբ Մեսրոպ Մաշտոցի գերեզման, Մուղնիի Սուրբ Գէորգ եկեղեցի, Սարդարապատի յուշահամալիք, Մայր Արքո Սուրբ Էջմիածին, Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարան, Գառնիի հեթանոսական տաճար, Գեղարդավան, Խոր Վիրապ, Նորավանք, Ծիծեռնակարերդի յուշահամալիք եւ Հայոց ցեղասպանութեան քանդարան-ինստիտուտ, Եղանակ, Երեւանի գաղանանոց եւ Սեւանավանք: Դարձեալ, ըստ ծրագրի, խումբն ամէն օր մասնակցում էր հայոց լեզուի դասընթացին:

**Մելինէ Անումեան- Ներկայացէ՞ք ինդրեմ: Ո՞վ էք: Որտե՞ղ էք ծնուել: Ներկայում որտե՞ղ էք ապրում, որտե՞ղ՝ աշխատում: Ի՞նչ գործունէութիւն էք ծաւալում:**

Ձիւան Տիգրիս- Ձիւան Տիգրիսն եմ: Ծնուել եմ 1972 թ., Տիգրանակերտում (նկատի ունի Տիգրապետիքը- Մ.Ա.): Այստեղ եմ ստացել թէ՛ տարրական, թէ՛ միջնակարգ եւ թէ՛ բարձրագոյն կրթութիւնս: Հայկական ծագում ունեմ՝ եւ մօրական, եւ հօրական կողմից... Սակայն մեծացել եմ որպէս քիւրտ եւ մահմետական: Փոքր հասակից սկսած՝ լսել եմ մօրս եւ մեծ մօրս այն օրօրոցայինները, որոնք չէին հասկանում եւ միայն յետագայում եմ իմացել, որ դրանք հայոց լեզուով են: Մօրական տասու իր ամբողջ ընտանիքը կորցրել է Յեղասպանու-

նոյն օրերին, Սփիտքի նախարարութեան կազմակերպութեամբ, Ռաֆֆի Պետրոսեանը նրանց համար համերգ տուեց Երեւանի «Առնօ Բարաշանեանի» անուան համերգասրահում:

Օգոստոսի 6-ին ՀՀ Ազգային ժողովի պատգամաւոր Արագած Ախոյեանն իսլամացած հայերի համար հիւրասիրութիւն կազմակերպեց «Զուարթնոց» համալիրում: Երեկոյթին մասնակցում էր նաեւ «Նուպար» համոյքը, որը հանդէս եկաւ հայկական ժողովրդական երգերի եւ պարերի կատարումներով: «Նուպար» ներկայացրեց նաեւ համշենահայկական պարեր, որին մեծ ոգեւորութեամբ մասնակցեցին համշենահայ հիւրերը:

Օգոստոսի 11-ին մի խումբ տիրապետիքից հայեր այցելեցին նաեւ Հայաստանի Հանրային ուստիո կամ, իրենց խօսքերով ասած, «Երեւանի ուստիո», որտեղ հիւրընկալուեցին ՀՀՌ գործադիր տնօրէնի տեղակալ Ներսէս Դաւիդեանցի կողմից: Տիգրապետիքիները Ռատիոտանը հարցազրոյցներ տուեցին Հանրային ուստիոյի «Հայրենիք-սփիւռք. կամուրջ» ծրագրին եւ եզախերէն հաղորդումների խմբագրին:

Իսլամացած հայերը Հայաստանի Հանրապետութիւնից հեռացան չերմ տպաւորութիւններով՝ շեշտելով հայաստանցիների հիւրընկալութեան, հայկական հարուստ մշակոյթի առանձնայատկութիւնների եւ Երեւանի տպաւորիչ գեղեցկութեան մասին:

Սոյն ծրագրին մասնակցած չորս իսլամացած հայերի հետ զրուցեցին Ֆուրքիայում հայ լինելու, «Արի տուն» ծրագրից եւ Հայաստանից ստացած տպաւորութիւնների եւ այլ յարակից քեմաների շուրջ: Հարցազրոյցն իրականացրեցին համացանցի միջոցով, բուրքերէնով՝ բոլորին ուղղելով միեւնոյն հարցերը.

Ժեան Ժամանակ. միայն մի քոյրն է ողջ մնացել: Յետագայում մի գնդապետ տատիս որդեգրել է եւ աւելի ուշ ամուսնացրել իր հրամանատարութեան տակ գտնուող մի զինուոր եղող պապիս հետ: Իսկ մեծ մօրս քրոջը շուկայում վաճառել են, երբ դեռ փոքր է եղել, եւ նրա ճակատագրի մասին ոչ մի տեղեկութիւն չունենք: Ինքս, արդէն 27 տարի է, ինչ երաժշտութեամբ եմ զբաղւում: Երկու ալպոմ եմ թողարկել, մէկը՝ 1992 թ., միւսը՝ 1998-ին: Դրանք երկուսն էլ բաղկացած են միայն քրտերէն երգերից: Բազմաթիւ նախագծերի եմ մասնակցել արտերկրում եւ թուրքիայում: 1989 թ. ստեղծել եմ իմ բնակավայրում առաջին մանկական երգչախումբը, իսկ 2005-ին՝ առաջին կանացի երգչախումբը: Ներկայում երաժշտութեան դասեր եմ տալիս եւ իմ աշխատանքները շարունակում այս ոլորտում:

*Մաս էք կը հովանաւորին Ա. և Ա. Գրիգոր և Քրիստոն Կոյրաման*



# JERUSALEM RESTAURANT



[www.jerusalemrestaurant.com](http://www.jerusalemrestaurant.com)

4775 Leslie street,  
Toronto, ON M2J 2K8  
Tel.: (416) 490-7888

take out  
CATERING  
BANQUET FACILITIES  
**416-490-7888**

mediterranean  
**buffet**



Նեճուշը Ալթունքայա-

**Ալի Աքսու- Ես Ալի Աքսուն եմ: Ծնուել եմ 1960 թ. Մարտի 1-ին, Արդուինի Խոպա գաւառում: Աշխատել եմ որպէս փոսթատար: Թոշակի եմ անցել 2015 թուականին:**

**Տիրեն Սարըճա- Անունս Տիրեն Կիւլճան Սարըճա է: Ծնուել եմ թունելիում, որին մենք՝ այստեղ ավրողներս, Տերսիմ ենք ասում: Ներկայում եւս ապրում եմ Տերսիմում եւ աշխատում մի թերթում՝ որպէս թղթակից:**

**Նեճուշէ Ալթունքայա- Անունս Նեճուշէ Ալթունքայա է: Ծնուել եմ Արդուին նահանգի Խոպա գաւառին ենթակայ Ղալպաշի գիւղում: Ներկայում էլ եմ այստեղ ապրում: Զբաղուում եմ գիւղատնտեսութեամբ, մասնաւրապէս՝ թէյի մշակմամբ:**

**Մելինէ Անումեան - Ե՞րբ եւ ինչպէս էք իմացել Ձեր հայ լինելու մասին: Ի՞նչ էք զգացել այդ պահին:**

**Զիլան Տիրդիս- Յաւօք հայ լինելուս մասին տեղեկացել եմ մօրս մահից յետոյ միայն, այսինքն՝ 2000 թուականին: Սակայն մեր տան պատին մի մեծ նկար էր կախուած, որում պատկերուած էր Մարիամ Աստուածածինը, գրկին՝ Յիսուս Քրիստոսը: Մեր պատի գորգի վրայ էլ մի պատկեր կար, որում Քրիստոսի ծնունդն էր ներկայացուած: Մեր տան կահ-կարասին ու մեր կենցաղը նման չէին մեր հարեւանների իրերին եւ կենցաղին: Սակայն մայրս ամէն առաւօտ վաղ արթնանալով՝ Ղուրան էր ընթերցուած: Բայց եւայնպէս, մենք տարբերուում էինք մեր հարեւաններից՝ սկսած լոգանք ընդունելու մշակոյթից մինչեւ խոհանոց: Երբ մօրս հարցնում էի՝ «Դու ինչո՞ւ մօրաքոյր կամ մօրեղբայր չունես», ասում էր. «Մի վարակիչ հիւանդութիւն է տարածուել, որի հետեւանքով բոլորը մահացել են. միայն մայրս ու մօրաքոյրս են մնացել»: Ես էլ հաւատում էի՝ առանց խորամուխ լինելու: Սակայն մօրական տատիս մահից յետոյ յաճախ էր պատահում, որ մայրս գաղտնի արտասուէր: Երբ հարցնում էի պատճառը, ասում էր՝ «Հենց այնպէս»: Յետագայում հասկացայ, որ դա տրամայի հետեւանքն էր: Երբեք չեմ տեսել, որ մայրս կամ տատս սրտանց ծիծաղեն...**

**Հայրս Էլազիկի (Խարբերդ-Մ.Ա.) Գերմիլի (Գերմուրի)**

**գիւղից է: Նրա մայրն էլ է Ցեղասպանութիւնից վերապրած եղել: Խսկ հօրական պապս Պինկէոլի մահմետական քրտերից է: Երբ հայրս 6-7 տարեկան է եղել, նրա մայրն ինքնասպանութիւն է գործել կամ սպանուել է: Հայրս իր հօրեղօր մօտ է մեծացել՝ հովուութիւն անելով: Հայրս երբեք լաւ չէր արտայայտում քրտերի հասցէին: Սակայն եւ դա սխալ էի մեկնաբանում: Կարծում էի, թէ հայրս թուրք ազգայնամոլ է, քանի որ մտերիմ կապեր ուներ Էլազիկի տեղական իշխանութիւնների հետ: Ես միշտ ասում էի հօրս. «Էլազիկցիները տիարպերիցիներին չեն սիրում, բայց դու սխալում ես, հայրի'կ»: Այսինչ, պարզուում է՝ ես էի սխալում: Միայն տարիներ անց էի իմանալու, թէ ի՞նչ խորն է նրան խոցել քրտերի ձեռքով կատարուած կոտորածը:**

**Ինձ համար բարդ չի եղել հայ լինելուս մտքին վարժուելը: Մինչ այդ էլ չէի կատարում իսլամի բոլոր պահանջները: Խիստ հազուադէպ էի ծոմ պահում կամ նամազ անում: Փոքր տարիքում Ղուրանի դասընթացի էի գնացել: Երբ իմացայ, որ հայ եմ, սկզբում լուրջ հոգեբանական պահեր ապրեցի, որովհետեւ 20 տարի շարունակ ծառայել էի «քրտական երաժշտութեանը»՝ առանց իմանալու իմ մայրենի լեզուն եւ առանց հաղորդ լինելու սեփական մշակոյթիս: Մինչդեռ իմ մշակոյթը շատ աւելի հարուստ էր: Սկսեցի նոր նպատակներ գնել իմ առաջ. պէտք է իմանայի իմ հարազատ մշակոյթը, պատմութիւնն ու լեզուն: Այնքան հարուստ ու գունագեղ պատմութիւնն ունէր իմ ազգը, որ որոշ բաներ իմանալիս մի կողմից ուրախանում էի, միւս կողմից՝ տիրում: Օրինակ՝ երբ իմանում էի, որ այն ստեղծագործութիւնները, որոնք տարիներ շարունակ կարծել եմ, թէ քրտական են եւ որպէս այդպիսին ներկայացրել դրանք, իրականում հայկական են, թէ ուրախանում էի եւ թէ վշտանում:**

**Ալի Աքսու- 1977 թ. գործի բերումով մի աննշան շփում ունեցայ հայերի հետ: Այդ ժամանակուանից սկսած ինձ մօտ կարծիք ձեւաւրուեց առ այն, որ մենք ինչ-որ կապ ունենք հայերի հետ: Դեռեւս համոզուած չեմ, որ մենք՝ համշէնցիներս, հայ ենք: Ես ժողովուրդներին չեմ մօտենում՝ ազգութեան, ցեղի տեսանկիւնից: ինձ համար էական է մարդկային արժէների չափորոշչէը: Այդ պատճառով էլ ինձ համար տարբերութիւն չկայ՝ դիմացինս հայ է, քիւրտ, թէ լազ... Ոչ մի նշանակութիւն չունի:**

**Տիրեն Սարըճա- Ի սկզբանէ էլ իմացել եմ հայ լինելուս մասին: Մեր ընտանիքը գիտէր այդ մասին, սակայն որոշ պատճառներից ենելով՝ չէր կարողանում հրապարակել դա: Առաջին անգամ միայն 17 տարեկանում կարողացայ ընկերուից մէկին յայտնել իմ հայ լինելու մասին: Հստ էութեան, դա շատ հաճելի զգացմունք է, որը մարդուն զգացնել է տալիս իր միւսներից տարբեր լինելը, սակայն նաեւ՝ խառնաշփոթ է յարուցում նրա ներսում...**

**Նեճուշէ Ալթունքայա- Դպրոցում եմ իմացել հայ լինելուս մասին: Նկատեցի, որ մեր լեզուն (նկատի ունի հայոց լեզուի՝ Համշէնի բարբառը- Մ.Ա.) տարբերում է միւսների լեզուից: Յետագայում ուսումնասիրելով՝ տեղեկացայ, որ համշէնցիները հայ են:**

**Մելինէ Անումեան- Լստ Զեղ՝ ի՞նչ է նշանակում հայ լինել թուրքիայում:**

**Միշտ իր հովանաւորն Ա. և Ա. Նորայր եւ Արշակ Միրայրեանն**

# HONDA GABRIEL ANJOU

## Best. Civic. Ever.

The all-new 2016 Civic.

Starting From  
**\$15,990**



**Kevork Asadourian**  
Directeur des ventes  
Véhicules d'occasion



**Harry Saiyan**  
Représentant des ventes  
Véhicules certifiés



**Vahan Vartanian**  
Représentant des ventes  
Véhicules certifiés



**HONDA**

**HONDA**  
**GABRIEL**  
ANJOU

◀ OPEN SATURDAYS ▶

7000, boulevard Henri-Bourassa E.  
Montréal-Nord, QC H1G 6C4  
514 327-7777 | 1 877 516-0355  
[www.hondagabrielanjou.com](http://www.hondagabrielanjou.com)

\*Conditions apply. Taxes not included. Limited time offer applicable on selected models only and subject to change or cancellation without notice. For more information, visit Honda Gabriel.

Զիլան Տիգրիս- Նշանակում է այս տարածքների տէրը լինել, բայց օտարից էլ օտար լինել՝ արտասահմանցու նման... Թուրքիայում հայ լինել նշանակում է՝ գիտակցել հասարակութեան մէջ քո թողած հետքերը եւ համայն մարդկութեանը տուած քո արժէքները, հաւատարձութեան երդում տալ դրանց, բայց շարունակել լուռ մնալ... Նշանակում է ապրել անհանգստութեան մէջ... Նշանակում է, որ սխալ են հասկանալու քո վերաբերմունքն ու մտադրութիւնները, եւ դու թիրախ ես դառնալու շատերի համար... Նշանակում է՝ երբ որոշ մարդիկ իմանան, որ հայ ես, ոոյն պահին կը փոխեն իրենց վերաբերմունքը քո հանդէպ... Նշանակում է՝ նեղութեան մէջ ապրել սեփական հողում... Նշանակում է՝ վստահութեամբ չնայել ապագային... Այստեղ հայ լինել նշանակում է՝ «ցաւը մեղր գարձնել», եւ ես երբեք չեմ հրաժարուի այդ մեղրից...»

**Ալի Աքսու-** Որեւէ գաղափար չունեմ Թուրքիայում հայ լինելու վերաբերեալ, քանի որ ես այստեղ ապրել եմ որպէս համշէնցի:


**Տիրեն Սարըճա-** Զեմ կարող պատասխանել այդ հարցին:

**Նեճտէթ Ալթունքայա-** Նշանակում է՝ մարդ լինել:

**Մելինէ Անումեան-** 2015 թուականի ամբանը Դուք մասնակցել էք ՀՀ Սփիւռքի նախարարութեան՝ «Արի տուն» ծրագրին: Ինչպէս էք գնահատում այդ ծրագիրը:

Զիլան Տիգրիս- Լաւ մտածուած, սակայն մի փոքր ուշացած նախագիծ է: Կարծում եմ, որ սոյն ծրագրի մասնակիցների՝ Հայաստան այցելութեան նպատակները պէտք է աւելի յստակ լինեն. դա պէտք է առաւելապէս լինի ոչ թէ սովորական շրջագայութիւն, այլ հայոց պատմութիւնը, մշակոյթը եւ, ամենակարեւորը, անցեալը ներկայացնելուն ուղղուած մի ծրագիր: Երբեմն այդպէս էլ լինում էր, սակայն մենք ուղեկցորդի կարիք ունէինք, քանի որ չէինք կարողանում յստակ պատասխաններ ստանալ մեր տուած հարցերին: Կարծում եմ աւելի լաւ կը լինէր, եթէ որեւէ գրքոյկ լինէր այն մասին, թէ որ վայրերն ենք այցելելու (նման գրքոյկ արուել էր մասնակիցներին, սակայն՝ անգլերէնով, թերեւ նկատի ունի թրքերէնով նման գրքոյկ առկայութիւնը- Մ. Ա.):

**Ալի Աքսու-** Այո՛, ես եւս մասնակցեցի «Արի տուն» ծրագրին, եւ լաւ է, որ մասնակցեցի, քանի որ այն ինձ հնարաւորութիւն ընձեռնեց տեսնելու Հայաստանն ու հայերին, մօտ լինելու հայ ժողովրդին: Սակայն ծրագրի բովանդակութիւնն ինձ չբաւարարեց: Ես ակնկալում էի ծանօթանալ հայկան մշակոյթի, երաժշտութեան, արուեստի, բանահիւսութեան, ընտանեկան կենցաղի, գրականութեան եւ ֆիլմարուեստի հետ, բայց այդպէս չեղաւ: Կարծես այս ծրագիրը մշակուած լինէր ոչ թէ «Արի տուն», այլ՝ «Վերապարձ քրիստոնէութեանը» խորագրի ներքոյ՝ Հիմնուած էթնիկ ազգայնականութեան վրայ: Մեզ տարան երեք թանգարան ու 10-ից աւելի եկեղեցի եւ տաճար: Այդ երեք թանգարանները հրաշալի էին: Սակայն 10-ից աւելի եկեղեցի եւ տաճար այցելելն ինձ բոլորովին էլ գուր չեկաւ: Կարելի էր սահմանափակուել 2-3 եկեղեցով: Յոյսով եմ՝ յետագայում «Արի տուն» ծրա-



Զիլան Տիգրիս

գիրն իր անուանն աւելի համահունչ ձեւով կը մշակուի եւ այդ կերպ կը շարունականութիւնը, սակայն, ինչպէս նշեցի, ըստ իս՝ նրա բովանդակութիւնը պէտք է փոփոխութեան ենթարկուի: Ես առաջարկում եմ այս ծրագիրը մշակողներին՝ վերանայել դրա բովանդակութիւնը:

**Տիրեն Սարըճա-** Ինձ մի առանձնայատուկ յուզմունք պատճառեց հարազատ մարդկանց շրջապատում լինելը: Այդ ընթացքում ինձ ցուցաբերուած հիւրասէր վերաբերմունքն զգացնել տուեց, որ իմ տանն եմ գտնւում:

**Նեճտէթ Ալթունքայա-** Կարող եմ հաւաստել, որ խիստ դրական եւ լաւ միջոցառում է:

**Մելինէ Անումեան-** Ի՞նչ զգացումներ ունեցաք Հայաստանում: Ինչպիսի՞ ապրումներով ժամանեցիք եւ ի՞նչ տպաւորութիւններով հեռացաք:

Զիլան Տիգրիս- Պատկերացրէք մի երեխայի, որը տարիներ շարունակ ձեր ներսում է եղել, որի գէմքը երբեւից չէք տեսել, բայց պահել, փայփայել ու սիրել էք նրան եւ վերջապէս առերեսուում էք նրա հետ... Հենց այդ զգացմունքն ունեցայ, երբ տեսայ Հայաստանը... Բացարձակապէս օտարութիւն չգացի. ամէնուր, ամէն բան այնքան ծանօթ ու հարազատ էր ինձ... Միայն Հայաստանի՝ տնտեսապէս աղքատ լինելու հանգամանքն խորապէս խոցեց ինձ: Անընդհատ պապերիս պատկանող հետքերին հանդիպելը խիստ յուզիչ էր...

**Ալի Աքսու-** Հայաստանում ինձ զգացի այնպէս, կարծես երկրորդ քաղաքացիութիւնս այնտեղին պատկանէր: Շատ հանգիստ էի: Այն փասար, որ փողոցներում հանգիստ կարողանում էի զրուցել մարդկանց հետ, վստահութիւն էր հաղորդում ինձ: Խիստ երջանիկ էի, որ տեսնում էի այն Հայաստանը, որտեղ բազմաթիւ ծանօթներ ունէի, որոնցից մի քանիսի

*Այս էջը կը հովանաւորեն Մերը ու Միկ. Գալուստ և Անգամ Ջրիգորեան*



# GRANITE

P R E S T I G E M B

COMPTOIRS DE CUISINES ET SALLES DE BAIN  
KITCHEN & BATHROOM COUNTERS

**Prise de mesures**

**Fabrication**

**Livraison et Installation rapide**

**Measurements taken**

**Manufacture**

**Fast Delivery & Installation**



Spécialiste Comptoirs

Counter Specialists

Granite ~ Quartz

Marble ~ Marbre

**GRATUIT • FREE\***  
Évier de cuisine / Kitchen Sink

Valeur de **\$350**  
Value of **\$350**

Commande min. / Min. order \$2500.00

Achetez au Prix du Fabricant!  
Buy direct from

the Manufacturer!



FINANCEMENT DISPONIBLE  
FINANCING AVAILABLE

Service  
*Cle en main*  
*We do it all!*

514-331-8337

7111 TRANS CANADA HWY. VILLE ST-LAURENT, QC H4T 1A2  
VOISIN DE RONA et GUZZO • NEXT TO RONA HARDWARE & GUZZO



Տիրեն Սարդաս

Հետ լաւ բարեկամ էի դարձել, այն Հայաստանը, որի անունը թէեւ յաճախ էի լսել, շատ էի ցանկացել այցելել այնտեղ, բայց մինչ այդ ոչ մի կերպ չէի կարողացել գնալ: Եկայ, տեսայ եւ վերադարձայ: Սակայն հեռանալիս թէ՛ երջանիկ էի, թէ՛ տիտր եւ պէտք է խոստովանեմ, որ նոյնիսկ հիասթափուած...

**Տիրեն Սարդաս-** Ըստ էութեան, մի առանձնայատուկ, անմեկնելի յուզմունքով եկայ Հայաստան, դէպի ուր տանող ուղին անվերջանալի էր թւում ինձ հենց այդ յուզմունքիս պատճառով... Ամէն բան հրաշալի էր: Երջանիկ էի: **Մարդիկ** լաւն էին: Շատ լաւ ընդունեցին մեզ, եւ այնտեղից հեռացայ հանդիսատ ու խաղաղուած հոգով...

**Նեճտէթ Ալթունքայա-** Զգացի, որ իմ հարազատ տունն եմ գնացել: Գիտակցեցի, թէ որքան են այնտեղի մարդիկ նման հոպայում բնակուող համշէնցիներին:

**Մելինէ Անումեան-** Ամենաշատը ի՞նչ հաւանեցիք Հայաստանում:

Զիլան Տիգրիս- Նախ եւ առաջ՝ հոյակապ ճարտարապետութիւնը: Ինձ վրայ յատկապէս մեծ տպաւորութիւն գործեց փողոցների բարեկարգ եւ մարդուր լինելը: Մեզ բոլորովին օտար չէինք զգում՝ մարդկանց ջերմ վերաբերմունքի շնորհիւ...

**Ալի Աքսու-** Շատ հաւանեցի, որ հայերը մարդամօտ, վստահելի, իրենց խօսքին տէր եւ հիւրասէր ժողովուրդ են:

**Տիրեն Սարդաս-** Հաւանեցի, որ Հայաստանում ամէն բան կանոնակարգուած էր, եւ մարդիկ իրապէս եղբայրաբար էին ապրում:

**Նեճտէթ Ալթունքայա-** Հաւանեցի այն բոլոր վայրերը, որ այցելեցինք: Սակայն ամենատպաւորիչն ինձ համար եղաւ Յեղասպանութեան թանգարանը:

**Մելինէ Անումեան-** Կապեր հաստատեցի՞ք Թուրքիայի այլ շրջաններից եկած՝ ծրագրի մասնակցների հետ:

Զիլան Տիգրիս- Անշուշտ: Բնկերացանք Խոպայից ու Տերսից եկած հայերի հետ: Նոյն ճակատագիրը կիսած լինե-

լու փաստն անքակտելի կապերով միաւորեց մեզ:

**Ալի Աքսու-** Ծանօթացանք Տիգրպեքիրից ու Տերսիմից եկած մասնակիցների հետ, բայց դեռ նոր եմ սկսել կապեր հաստատել նրանց հետ:

**Տիրեն Սարդաս-** Ո՞չ, նման կապ չհաստատեցի: Իրականում չկարողացանք, քանի որ նման հնարաւորութիւն չընձեռնուեց մեզ:

**Նեճտէթ Ալթունքայա-** Այո՛, ես կապեր պահպանում եմ նրանց հետ:

**Մելինէ Անումեան-** Հայաստանում Զեր անցկացրած օրերից ո՞րը երբեք չէք մոռանայ:

Զիլան Տիգրիս- Երբեք չեմ մոռանայ այն ապրումները, որ ունեցայ Յեղասպանութեան թանգարանում: Օրեր շարունակ չէի կարողանում ուշքի գալ Յեղասպանութեան այն պատկերներից, որոնց ի տես ցնցուել էի իմ ողջ էութեամբ...

**Ալի Աքսու-** Հայաստանում 9 օրը մնացի: 9 օրս էլ խիստ բովանդակալից անցան: Կարող եմ ասել, որ ինձ համար անմոռանալի էին յատկապէս այն օրերը, երբ հիւրընկալուեցինք Հայկազուն Ալվրցեանի եւ Գառնիկ Մատինեանի օճախներում: Երբեք չեմ մոռանայ նաեւ այն օրը, որն անցկացրեցինք Մաղկաձորում՝ Զեր ընտանիքի հետ միասին, Մելինէ՛ ճան:

**Տիրեն Սարդաս-** Մարդկանց համար անմոռանալի է դառնում այն, ինչն առաջին անգամ է պատահում նրանց հետ: Նմանապէս ինձ համար էլ անմոռանալի է իմ այցելութեան առաջին օրը: Նաեւ երբեք չեմ մոռանայ դաշնակահար Ռաֆքի Պետրոսեանի համերգի օրը, որը մեծ տպաւորութիւն գործեց ինձ վրայ:

**Նեճտէթ Ալթունքայա-** Երբեք չեմ մոռանայ «Զուարթնոց» համալիրում կազմակերպուած տպաւորիչ եւ ուրախ երեկոյթը:

**Մելինէ Անումեան-** Հայերէն գիտէ՞ք կամ ցանկանո՞ւմ էք սովորել:

Զիլան Տիգրիս- Յաւօք լաւ չգիտեմ: Աշխատում եմ սովորել: Քանի որ տարիներ շարունակ հայերէն երգեր եմ կատարել, գրա չնորհիւ շատ չեմ գտուարանում սովորելու հարցում: Միայն թէ, ցաւօք սրտի, հնարաւորութիւն չունեմ որեւէ մէկի հետ շփուելու:

**Ալի Աքսու-** Ես հայերէն լաւ չգիտեմ: Շատ քիչ գիտեմ: Ի հարկէ կը ցանկանամ սովորել. քանի լեզու գիտես՝ այնքան մարդ եսու... (Ալի Աքսուն հրաշալի կերպով տիրապետում է իր մայրենի լեզուին՝ հայերէնի համշէնի բարբառին: «Հայերէն լաւ չգիտեմ» ասելով՝ նկատի ունի արեւելահայերէնը՝ Մ.Ա.):

**Տիրեն Սարդաս-** Հայերէնից միայն որոշ բառեր գիտեմ, բայց շատ եմ ուզում սովորել: Զէ՞՞ որ այն վերջիվերջոյ իմ

*Կայսէր կը հովանաւորեմ Ա. և Ա. Ասրդիս եւ Նախան Կայրաբենան*



# DOUNIA

## RESTAURANT

LEBANESE  
CUISINE

مطعم دنيا  
ماكولات عربية و لبنانية



### Ազգային Թորոսթոյի հայութեան

Գանատայի անկախութեան տարեդարձին՝ 1 Յուլիս 2015-ին, պաշտօնական բացումը կատարվեցաւ DOUNIA LEBANESE CUISINE RESTAURANT-ի ուր համով հոտով կրնաք ուտել Լիբանանի մեջ հոչակ վայելող մասնագետ շեֆ Միհրան (Chef Mihran) պատրաստութեամբ ֆիլէ միսիոն, շիշ բեպապ, շիշ թաուք, բօֆտուա, շաումա, ֆալաֆել, եւայլ...

**hawgt' 1331 WARDEN AVENUE, UNIT 1  
SCARBOROUGH, ONTARIO**

հեռախայնի թիւեր՝ (647) 560-1073  
(647) 402-3003

FREE DELIVERY  
CATERING SERVICE  
WHITE FISH ON ORDER

մայրենի լեզուն է:

**Նեճտէթ Ալթունքայա- Այո՛:** ( Նկատի ունի հայոց լեզուի համշնի բարբառը- Մ.Ա.):

**Մելինէ Անումեան- Շփումներ ունեցա՞ք հայաստանցի հայերի հետ: Հայաստանում ընկերներ ունէ՞ք:**

Զիլան Տիգրիս- Դժբախտաբար, առանձնապէս հնարաւորութիւն չունեցայ հայաստանցիների հետ շփուելով՝ բացառութեամբ միջոցառումների ժամանակ ծանօթութիւններ հաստաելու դէպքերի: Հայաստանում շատ ընկերներ չկարողացայ ձեռք բերել նաեւ հայոց լեզուին լաւ չտիրապետելուս պատճառով: Միակ ընկերս այստեղ դու ես, սիրելի՛ Մելինէ, Աննան (նկատի ունի Սփիւռքի նախարարութեան աշխատակից Աննա Միքայէլեանին- Մ.Ա.) եւ մեր հայերէնի ուսուցիչ Միմոն Պետրոսեանը:

**Ալի Աքսու- Ես Հայաստանում լաւ ընկերներ ձեռք բերեցի: Կային ընկերներ, որոնց հետ գետ նախքան Հայաստան գալս էի ծանօթացել՝ քեյսպուք սոցիալական ցանցի միջոցով: Ումանց էլ ճանաչեցի այլ ընկերների միջոցով: Լաւ երկխօսութեան մէջ եմ նրանց հետ:**

**Տիրեն Սարըճա- Հայաստանում ոչ մի ծանօթ չունեմ՝ բացառութեամբ նրանցից, ովքեր մեզ հետ մասնակցում էին շրջագայութիւններին:**

**Նեճտէթ Ալթունքայա- Ունեցայ:**

**Մելինէ Անումեան- Որեւէ ուղերձ ունէ՞ք՝ ուղղուած Հայաստանում, Արցախում եւ Սփիւռքում ապրող հայերին:**

Զիլան Տիգրիս- Թէեւ Հարաբաղի վերաբերեալ մանրամասն տեղեկութիւնների չեմ տիրապետում, սակայն առաջնորդուելով՝ մարդկային չափորոշչով՝ առաջարկում եմ, որ կողմերը խաղաղ ճանապարհով լուծեն այս հարցը: Կարծում եմ եթէ Սփիւռքում ապրող ունենոր հայ ընտանիքները ներդրումներ անեն Հայաստանում, ապա վերջինս կը զարդանայ: Ըստ իս, դա է Հայաստանի բարեկեցութեան միակ ուղին:

**Ալի Աքսու- Ես կոչ ունեմ՝ ուղղուած բոլոր հայերին. մի կողմ թողնենք «Հայաստանցի հայ, արցախցի հայ, սիրւռքահայ» տարբերակումը: Սփիւռքի, Հարաբաղի եւ բոլոր միւս հայերը պէտք է ձեռք ձեռքի տան եւ իրենց հնարաւորութիւնների սահմաններում աջակցեն Հայաստանի զարգացմանը, ժողովրդի բարորութեանը, գործադրկութեան վերացմանը, արտագաղթի դադարեցմանը... Նրանք բոլորը միասին պէտք է ներդրումներ անեն՝ յանուն Հայաստանի բարօրութեան: Կարծում եմ, որ այն ջանքերի կէսը, որոնք գործադրում են Ցեղասպանութեան ճանաչման ուղղութեամբ, պէտք է իրականում ուղղուեն երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանը:**

**Տիրեն Սարըճա- Ակնկալում եմ, որ նրանք մշտապէս օգնեն ու աջակցեն մեզ՝ Արեւմտեան Հայաստանում հայկական արմատներ ունեցողներիս:**



Ալի Աքսու

**Նեճտէթ Ալթունքայա- Մաղթում եմ, որ սոյն ծրագիրն ընդլայնուի, եւ ապահովուի համայն աշխարհի հայութեան մէկտեղումը:**

**Մելինէ Անումեան- Ցանկանու՞մ էք որեւէ բան յաւելել:**

Զիլան Տիգրիս- Անհնար է մոռանալ անցեալը: Մեզ անդառնալի կորուստներ են հասցուել: Դա բացարձակ ճշմարտութիւն է: Ցեղասպանութեան իրագործման մէջ դեր խաղացածները պէտք է անվերապահօրէն ընդունեն Ցեղասպանութեան փաստը, ուղղակիօրէն առերեսուեն իրենց արածի հետ: Միայն այդ կերպ պարզ կը լինի, թէ ինչ կեանք կ'ունենանք ներկայում եւ ապագայում: Հետեւաբար՝ անհրաժեշտ է յստակեցնել այս դրութիւնը եւ մաքուր յիշողութիւն թողնել ապագայում: 1915-ը ոչ միայն մեր անցեալի, այլ նաև՝ ներկայի եւ ապագայի խնդիրն է: Անվերապահ առերեսումը թուրքիայում ապրող թուրքերի, քրտերի եւ միւս ժողովուրդների անխուսափելի մարդկային պարտականութիւնն է:

**Ալի Աքսու- Եկայ եւ տեսայ Հայաստանը, որի որոշ կողմերը հաւանեցի, որոշները՝ ոչ: Ընդհանուր առմամբ, ես եւ ընտանիքս գոհ ու երջանիկ հեռացանք Հայաստանցից: Իմ անկեղծ սէրն ու յարգանքն եմ արտայայտում Ձեզ, Մելինէ՛ ճան, որ ինձ հրաւիրեցիք մասնակցելու այս ծրագրին, համոզեցիք եւ ամէն բան արեցիք, որ գամ: Իմ երախտագիտութիւնն եմ յայտնում նաեւ մեզ երեւանում հիւրընկալած Սփիւռքի նախարարութեանը, ծրագրի հովանաւորներից Ռաֆիկի Պետրոսեանին, մեզ իրենց օճախներ հրաւիրած Հայկագուն Ալվրոցեանին եւ Գառնիկ Մատինեանին, «Զուարթնոց» համալիրում մեզ համար երեկոյթ կազմակերպած ՀՀ խորհրդարանի պատգամաւոր Արագած Ախոյեանին, ինչպէս նաև՝ «Զայն համշնական» ամսաթերթի գլխաւոր խմբագիր Սերգէ Վարդանեանին: Մաղթում եմ, որ յետագայում եւս միասին լինենք նմանատիպ միջոցառումներին: Լա՛ւ մենաք, Ասպած ձեզի հետ էլլի (հայոց լեզուի՝ համշնի բարբառով՝ «Լա՛ւ մնաք, Աստուած Ձեզ հետ լինի»): - Մ.Ա.):**

**Տիրեն Սարըճա- Ոչ:**

**Նեճտէթ Ալթունքայա- Աւելացնելու բան չունեմ:**

**Մելինէ Անումեան**

**Կայսէր կը հովանաւորեն ԱՌ. Եւ ԱՌ. Քաջարի եւ Կայքին Օհանեան**



 **LUGARO GW**

METROPOLIS AT METROTOWN - 604.430.2040  
LUGARO.COM

GLOBAL WATCH COMPANY  
925 W. GEORGIA • 404.684.8415  
GLOBALWATCHCO.COM

## Մեր երիտասարդութիւնը միշտ պատճեշի վրայ է

### Հարցազրոյց Գանատայի Կեդրոնական կոմիտեի ներկայացուցիչ Դաֆֆի Տօնապետեամին հետ

**Հարց.-** Այս տարի 100-ամեակն էր Հայոց ցեղասպանութեան եւ այդ առթիւ, ինչպէս այլ գաղութներու մէջ, Գանատայի մէջ եւս տեղի ունեցան նախաձեռնութիւններ: Քաղաքական գետնի վրայ Գանատայի մէջ ի՞նչ իրագործումներ տեղի ունեցան, յատկապէս Հայ դատի աշխատանքներու ծիրին մէջ:

**Պատ.-** Մեր արքեւորումով Գանատայի Հայ դատի յանձնախումբը ընդհանրապէս իր վրայ դրուժ պարտականութիւնները լիովին կատարեց եւ գերազանցեց: Մենք այս շրջանին ազգային միասնականութիւնը դրինք այնպիսի մեքանիզմի մը մէջ, որ ընդհանրապէս աշխատանքները ներդադութային, ներազգային իմաստով հեշտ ընթացան: Աշխատանքները սկսան կանուխ՝ 2014-ի աշնան եւ կը շարունակուին մինչեւ այսօր, որպէստեւ տակաւին աշխատանքներ ու ձեռնարկներ կան: Բաղդատմամբ այլ շրջաններու՝ իսկապէս ճոխ եւ բոլոր մարզերով ամբողջական աշխատանք տարրուցաւ: Գալով քաղաքական աշխատանքներուն, մենք ուղեցինք 100-ամեակը քաղաքական գործոնի վերածել եւ մեր դատը յառաջ մղել, այդ իմաստով ալ բաւական մեծ յաջողութիւններ արձանագրուեցան: Գանատայի քաղաքական խաւի մասնակցութիւնը ձեռնարկներուն, Արեւելեան Գանատայի, Օնթարիոյի կամ հու՝ Քեպէգի մէջ աննախընթաց էր: Բոլոր կուսակցութիւնները, թէ՛ դաշնակցային, թէ՛ նահանգային մակարդակով, գրեթէ բոլորը մասնակցեցան, որոնցմէ էին Օնթարիոյի վարչապետը, Գանատայի պաշտպանութեան նախարարը, ներկայ վարչապետը, որ ատենին Ազատական կուսակցութեան ղեկավարն էր եւ ուրիշներ: Այդ առումով մասնակցութիւնը շատ լաւ էր եւ ընդհանրապէս իրենց պատգամները եւ որդեգրած կեցուածքները դրական էին: Ասոր կողքին շարունակուեցան եւս յուշարձաններու զետեղման աշխատանքները, որոնք թէեւ քաղաքապետական մակարդակի վրայ են, սակայն շատ կարենոր: Ինչպէս բոլորս գիտենք, Վանգուլը մէջ յուշարձանի գետեղումներ տեղի ունեցան, իսկ ներկայիս աշխատանք կը տարուի, որ ուրիշ քաղաքաներու մէջ եւս յուշարձանի գետեղումներ ըլլան: Անշուշտ այս բոլորին կողքին պէտք չէ մոռնալ բանաձեւը, որուն Ապրիլ ամսուան մէջ որդեգրումը կարեւորագոյն նախաձեռնութիւնն էր: Այս մէկը Հայ դատի յանձնախումբին եւ 100-ամեակի Միացեալ յանձնախումբին նիգերով եղաւ: Մեր երիտասարդականի տղաքը իսկապէս լաւ աշխատանք տարին, որպէսպէս գրեթէ միաձայնութիւն ապահովեն խորհրդարանին մէջ, եւ այնպէս պատահեցաւ, որ այդ բանաձեւը քուէարկուեցաւ Ապրիլ 24-ի օրը, երբ մեր ժողովուրդը մեծ թիւով Օթառուայի մէջ էր: Այս բոլորը ընդհանրապէս դրական են եւ դուռ կը բանան Հայ դատի եւ Հայաստանի ի նպաստ Գանատայի կողմէ նախաձեռնութիւններու, որովհետեւ ֆրանքոնիի, առեւտուրի եւ ընդհանրապէս Գանատա Հայաստան երկիրը յարաբերութիւններու զարգացումը շատ կարեւոր է, եւ մենք, իբրեւ Գանատայի հայութեան վրայ է առաջարկուելու համար:

Երկիրներուն միջեւ յարաբերութեանց կամրջովը ըլլալով՝ զանոնք ընդհանրապէս դրական եւ ճիշդ հունի մէջ կը նկատենք:

**Հարց.-** Սուրբիոյ տագնապը կը շարունակուի, եւ ինչպէս այլ գաղութներ, Գանատայի հայութիւնն ալ իր կարելին կ'ընէ աջակցելու համար սուրբիահայութեան գոյացութեայի համար ի՞նչ աշխատանք կը տանի, մանաւանդ որ սուրբիահայութեան համար ի՞նչ աշխատանք կը տանի, մանաւանդ որ սուրբիահայութեան համար ի՞նչ աշխատանք կը տանի:

**Պատ.-** Անշուշտ Սուրբիոյ մէջ շատ գժեախտ կացութիւն է: Իսկապէս ցաւալի է տեսնել Սուրբիոյ մէջ պատահածները եւ անոնց ազդեցութիւնը մեր հայահոծ գաղութներուն վրայ, մանաւանդ Հայէպի, Թեսապի, Դամասկոսի եւ Գամիշլիի մէջ: Նշեմ, որ մենք առաջին օրէն ի վեր մեծ աշխատանք կը տանինք, որպէսպէս պապակովենք Սուրբիոյ մէջ փոքրամասնութիւններու եւ մեր պարագային՝ հայ փոքրամասնութեան փիգիքական ապահովութիւնը: Ճիշդ է, որ Գանատայի կառավարութիւնը գործնականապէս շատ բան չի կրնար ընել, բայց արեւմտեան այլ երկիրներու կողքին ինք եւս պահանջեց պատերազմներու բոլոր կողմերին՝ փոքրամասնութիւններու իրաւունքներուն յարգումը: Այս մէկը իր գագաթնակիտին հասաւ, երբ Քեսապը գրաւուեցաւ, երբ Հայէպը ըրջափակուած էր, եւ սննունդ չէր հասներ: Ինչ կը վերաբերի գանատահայութեան, հայկական այլ գաղութներուն նման, այս աշխատանքին լծուած է չորս տարիէ ի վեր: Ընդհանրապէս մեր օժանդակութիւնը նիւթական է, որ հանգանակութիւններու ճամբով կ'ըլլայ, եւ Գանատայի Միացեալ յանձնախումբը, որ վերահսկող յանձնախումբ մըն է, իսկ հիմնական աշխատանքը կը տանին տեղական յանձնախումբերը, կը շարունակէ մեր գաղութը տեղեակ պահէլ վերջին անցուդարձերէն եւ կ'աշխատի նիւթական օժանդակութիւն ապահովել, որպէսպէս ըստ կարեւոյն Սուրբիոյ մէջ մնացողներուն օժանդակենք:

**Հարց.-** Նախապէս յայտարարած էիք հանգակուած գումարները: Յարդ որքա՞ն գումար փոխանցուած է:

**Պատ.-** Գրեթէ կէս միիլիոն տոլյարի հասած է, եթէ ոչ աւելի: Գանատայի Միացեալ յանձնախումբը ունի իր կայքէջը, եւ ստացագիրները կը զետեղուին այլտեղ: Հետեւաբար ընթերցողները կրնան այլտեղ տեսնել հանգանակուած գումարները: Անոնք ուղղակի թերիոյ թեմի շտապին կ'ուղարկուին. անոր կողքին ՀՕՄ-ը եւ ՀՄԼՄ-ը իրենց սեփական միջոցներով կ'օգնեն: ՀՕՄ-ը երկու տարիէ ի վեր նոր Տարուան առիթով գպրոցական պիտոյքներ կ'ուղարկէ եւ տարի մը նաև եւ վերաբերուներ ուղարկեց, իսկ ՀՄԼՄ-ը իր միջոցներով Սուրբիոյ մէջ գործող ՀՄԼՄ-ականներու կ'օժանդակէ եւայլն: Եթէ այս բոլորը գումարելու ըլլանք հաւանաբար կը ըրջանցէ

*Կայսէջը կը հովանաւորին Ա. և Ա. Քրիզան և Ասրի Հայութեան*



COLLISION CENTER - CENTRE DE COLLISION

Etablissement Tavoukdjian

6055 Pontgravé, Montreal, Quebec H4K-2E7

Tel : (514) 274-4133

Fax : (514) 904-2313

Email : [info@autoralph.com](mailto:info@autoralph.com)



Վերէն ձախէն աջ՝ ՀՅԴ Գանատայի Կեղրոնական կոմիտէի ներկայացուցիչ Մաֆֆի Տօնապետեամ Գանատայի նախկին պաշտպանութեամ նախարար Շէյքը Քէնիի, Վարչապետ Թրուտոյի եւ ՀՀ Սփիտորի նախարար Հրանուշ Յակոբեանի, Գանատայի արտաքին գործոց նախարար Արթուր Մինասյանը և ՀՅԴ Բիրուրի անդամ Յակոբ Տէր Խաչատորեամի, Գանատայի ժառանգութեամ նախարար Մելքոն Ժոլիի հետ:

**Նշած կէս միլիոնս:** Յիշեմ, որ Բերիոյ Թեմի առաջնորդը երբ Գանատա այցելեց, տեղի ունեցաւ ազգային վարժարաններուն համար յատուկ հանգանակութիւն: Այս աշխատանքներէն զատ գոյութիւն ունի նաեւ այստեղ ժամանող սուրբահայերու հարցը: Յատակ է, որ սուրբահայերու կարեւոր թիւ մը կը գտնուի Գանատա. անոնք այստեղ կը հասնին ընդհանրապէս իրենց ազգականներու կամ բարեկամներու երաշխաւորութեամբ, անոնց դիմաւորման աշխատանքին մէջ գաղութը կարեւոր գերակատարութիւն կ'ունենայ: Մինչեւ հիմա հասնողները ընդհանրապէս կը գտնուին մեծ քաղաքներու մէջ, ինչպէս Մոնթրէալ, Լատալ, Թորոնթօ եւ Վանկուվըր, սակայն կան նաեւ Հարաւային Օնթարիոյի, Քեմպբրիճի եւ Սէյնթ Քաթրինի մէջ հաստատուողներ: Այստեղ հասնող մեր սուրբահայ քոյրերն ու եղբայրները օժանդակութեան կարիքը ունին, որպէսզի վարդուին այստեղի կեանքին, իրենց զաւակները գպրոց ուղարկեն եւ գործ գտնեն: Սակայն հաւանաբար կարեւորագոյն մարտահրաւէրը ժամանողներու զաւակներու կրթական կարիքն է: Անշուշտ մեր գպրոցներու ցանցը կը դիմագրաւէ մարտահրաւէրը՝ զանոնք պատրաստելով, Փրանսերէնի առումով, որպէսզի կարենան յետագային շարունակել դպրոցական բնականոն կեանքը: Այս մէկը եւ նիւթական, եւ վայրի իմաստով լուրջ հարց է: Նախատեսելի է նաեւ, որ այս հարցը տակաւին առկայ է, մանաւանդ որ վերջին դաշնակ-

ցային ընտրութիւններու արդիւնքով կազումած նոր կառավարութիւնը պատրաստակամութիւն յայտնեց նոր գաղթականներ ընդունելու, եւ որովհետեւ այդ գաղթականներուն մեծ տոկոսը Լիբանանէն եկողներն են, կ'ենթադրենք, որ անոնց մեծ տոկոսը մեր սուրբահայ քոյրերն ու եղբայրները պիտի ըլլան:

**Հարց.-** Գանատայի երիտասարդական միութիւնը, չորրորդ տարին ըլլալով, կ'իրագործէ ազգանուեր եւ հայրենանուէր առաքելութիւն մը Վանաձորի մէջ, որ երիտասարդական ճամբարն է: Անոր կը մասնակցին շուրջ չորս հարիւր երեխաներ: Այս մէկը մեր գանատահայ երիտասարդութեան աշխոյժ գործունէութեան մէկ կարեւոր փաստն է: Այս առումով ի՞նչ ունիք ըսելիք, ըստ ձեզի, անոնք մեզի ի՞նչ ապագայ կը խոստանան:

**Պատ.-** Ատիկա ապագայի հարց չէ, այլ՝ ներկայի: Այս երիտասարդները մեր ներկան են, մեր առօրեային մասնակից են: Անոնք ոչ թէ ապագային պիտի ստանձնեն ղեկավարութիւնը, այլ արդէն բոլոր մակարդակներու վրայ անոնք ունին իրենց կարեւոր գերակատարութիւնը: Մեր կառոյցները երիտասարդներուն առիթը կ'ընծայեն ծրագրելու եւ գործադրելու իրենց աշխատանքները բոլոր մարզերէն ներս: Օրինակ

*Այս էջը կը հովանաւորեն ԱՌ. և ԱՌ. Աւելյանի և Արման Միհելյանի մասնակիցներին*



# LE CRYSTAL

SALLES DE RÉCEPTION

W W W . L E C R Y S T A L . C O M

5285 HENRI-BOURASSA O, VILLE SAINT-LAURENT, QC, H4R 1B7 - TÉL.: (514) 337-8160 - INFO@LECRYSTAL.COM



**տուիք Հայաստանի ճամբարը:** Նշեմ, որ մեր երիտասարդութիւնը յատուկ պարտականութիւն ստանձնած է օժանդակելու Հոռիի մարզի մեր կառոյցին: Անոնք մեծ ներկայութիւն են նաեւ Հայ դատի եւ 100-ամեակի աշխատանքներուն մէջ, կարեւոր դերակատարութիւն ունին սուրբահայ ներգաղթողներուն համար մշակուած ծրագիրներներուն մէջ, ինչպէս՝ անգլերէն եւ ֆրանսերէն սորպէցնելու եւ գործի փնտուառքի աշխատանքներուն մէջ: Այլ խօսքով մեր առօրեային մաս կը կազմեն եւ դերակատար են, այդպէս պէտք է ըլլայ ու շարունակուի: Մենք միշտ պիտի աջակցինք իրենց ու խրախուսնենք, որպէսզի ապագային եւս այդպէս մնայ: Մեր երիտասարդութիւնը միշտ պատնէշի վրայ է:

**Հարց.- Այս տարի Գանատայի մէջ տեղի ունեցան գաշնակցային ընտրութիւններ, եւ ինչպէս միշտ, Գանատայի Հայ դատի յանձնախումբը իր քաղաքական գործունէութեամբ մասնակից դարձաւ ընտրապայքարին: Այս առումով ի՞նչ նախաձեռնութիւններ ունեցաւ Հայ դատի յանձնախումբը:**

**Պատ.- Շատ հետաքրքրական ընտրարշաւ մըն էր գանատական պատումութեան մէջ, եւ Հայ դատի յանձնախումբը ու մեր գաղութները շատ կարեւոր դեր ունեցան: Ինչպէս գիտէք, ժողովրդավարութիւնը Գանատայի մէջ զօրաւոր արմատներ ունի: Ոմանք կը զարմանան, թէ խորհրդարանի մէջ երրորդ գիրքը գրաւող կուսակցութիւն մը ինչպէս իշխանութիւն կը գառնայ, սակայն որովհետեւ Գանատայի մէջ ժողովրդավարութեան արմատները խորն են, այդպիսի զարգացում մը կարելի է միշտ սպասել: Ըստ ընտրապայքարին, այդ կուսակցութիւններէն որեւէ մէկը կրնար այս ընտրութեամբ՝ դառնալ իշխանութիւն: Եւ մենք հարցը լաւապէս գիտարկելով՝ երեք հիմնական կուսակցութիւններուն, նաեւ չորս-հինգ փոքր կուսակցութիւններու հետ անցեալ տարուընէ արդէն լաւ յարաբերութիւններ մշակեցինք: Այս մէկը գիւրին չէ. նախկին իշխանութիւն եղող պահպանողականներուն հետ յարաբերութիւն մշակելը գիւրին էր, որովհետեւ գիտէինք, թէ ո՞վ է վարչապետը, ովքէ՞ր են նախարարները եւ բոլորին հետ շատ լաւ յարաբերութիւններ կը մշակէինք: Սակայն նոր հանգրուանով նոր ալիքներ կային, եւ պէտք էր կարենայինք լաւապէս ճանչնալ պատասխանատունները եւ զանազան,**

ո՞վ մեր բարեկամն է, ո՞վ՝ ոչ: Ազատականներու պարագային, որոնք խորհրդարանին մէջ երրորդ ուժն էին եւ ունէին միայն երեսունի հասնող երեսփոխաններ, իբրև վերանորոգման ու վերակազմակերպման արդիւնք, այս ընտրութիւններուն ընթացքին բազմաթիւ նոր դէմքեր յայտնուեցան, որոնց պէտք էր ծանօթանայինք եւ անոնց հետ յարաբերութիւններ մշակէինք, որպէսզի կարենայինք անոնց հետ բարեկամանալ եւ Հայ դատի աշխատանքներու եւ գաղութային կեանքի մակարդակներու իմաստով անոնց աջակցութիւնը շահիլ: Այդ աշխատանքը Կեղրոնական կոմիտէն, Հայ դատի յանձնախումբը եւ կոմիտէնները բաւական լաւ ձեւով կատարեցին, եւ որովհետեւ երեք կուսակցութիւններէն որեւէ մէկը կը կը ընտրութիւններուն յաղթանակ արձանագրել՝ մենք յաղթանակողին հետ լաւ յարաբերութեան մէջ էինք արդէն: Բարեբախտաբար կրնանք յայտնել, որ թէ՛ ներկայ իշխանութեան շրջանակին, թէ՛ ընդդիմադիր պահպանողականներու, թէ՛ ալ երրորդ գիրքը գրաւող կուսակցութեան շրջանակներուն մէջ ունինք լաւ բարեկամներ, եւ այդ իմաստով կը կարծենք որ պիտի կարենանք Հայ դատի մեր ապագայի աշխատանքները զարգացնել եւ շարունակել կամրջել Գանատա-Հայաստան յարաբերութիւնները:

**Հարց.- Այս տարի ՀՅԴ-ի 125-ամեակն է: Դաշնակցութիւնը Գանատայի մէջ իր կազմակերպական արմատները նետած է 1902-ին եւ մինչեւ օրս ներկայութիւն է: 125-ամեակի առիթով ի՞նչ է ձեր պատգամը Դաշնակցութեան շարքերուն եւ համակիրներուն:**

**Պատ.- Պատմութիւնը շատ կարեւոր է, եւ անկէ շատ բան կը սորվինք: Վերջին 125 տարիներուն ընթացքին ՀՅԴ-ն մեծ դերակատարութիւն ունեցած է: Բոլորը այդ պատմութիւնը գիտեն, եւ տօնակատարութիւններուն ընթացքին կը յիշաւակուին: Սակայն կարեւորը ապագան է, մեր դերակատարութիւնը ի՞նչ պիտի ըլլայ ապագային: Անցեալի մեր պատասխանատու ընկերներն ու ընկերուհիները մեզի պատրաստեցին ու ներշնչեցին, իսկ այժմ կարեւորը այն է, որ մենք ի՞նչ պիտի ընենք եւ ինչպէս մեր կարգին պիտի ներշնչենք ապագայ սերունդները: Հիմնական պատգամը այս է:**

«Հորիզոն»

*Այս էջը կը հովանաւորեմ ԱՌ. և ԱՌ. Կիրսին եւ Ակադ. Պալավունակ*

# **ANI BAKERY LTD**

## **ԱՆԻ ՓՈՒՊԱՆ**

### **Middle Eastern Pizza Lahmajoun**

#### **ՍԵՒԻՎԱԿԱՆԱՏԵՐ՝ ԱՐՄԵՆ Տապահեան**

Ուր կը գտնե՞ք հայկական եւ արաբական լահմանունի տեսակներ՝ փոքր եւ բևական չափերով։ Լահմանունը կը պատրաստենք մեր չափերով եւ յաճախորդներուն պահանջքին համաձայն։ Միսը իրենցմէ կամ մեզմէ։ Կը պատրաստենք եւ կը ծախենք նաեւ թահինով հաց։ Միշտ պատրաստ ենք ծեր ապսպրանքներուն գոհացում տալու ուրախ եւ տիսուր առիթներով։

**Փորձեցեք եւ  
գոհ պիտի մսաք**



**NEW ADDRESS:** Ani Bakery Ltd. 112 Crockford Boulevard Unit 2  
Scarborough, Ontario M1R 3C3 - հեռածայն՝ (416) 285-7164

Բաց ենք շաբաթը վեց օր, Կիրակի մինչեւ կեսօրեւ ետք՝ ժամը 2:00  
(Երկուշաբթի փակ)

# Գրախօսական

## Հգրուած վեպի մը

Ակիզբէն ըսեմ՝ գլուխ գործոց մըն  
է այս վէպը։ Այսպիսի վէպ ցարդ չէ՝  
գրուած։

Որեւէն նախընթաց չունի այս վէ-  
պը, իսկ անոր կառոյցը ամբողջովին  
ինքնուրոյն է՝ ոչ մէկ նմանութիւն աս-  
կէ առաջ գրուած որեւէ վէպի հետ։

Այս վէպը չունի որեւէ յատուկ  
սկիզբ, չունի եւ յատուկ վերջ։ Կարելի է  
կարդալ սկսիլ որեւէ էջէ, կանգ առնել  
որեւէ էջի վրայ. կարելի է նոյնիսկ կար-  
դալ դէպի ետ. բոլոր պարագաներուն  
ալ ընթերցողը անմիջապէս պիտի մտնէ  
պատմութեան մէջ ու առանց դժուա-  
րութեան հետեւի անոր յառաջընթացին  
կամ յետընթացին։

Աւելին՝ ան պիտի նոյնանայ  
անոր հերոսին, աւելի ճշշտ՝ հերոսներէն  
ուեւէ մէկուն հետ, քանի որ մէկ հերոս  
չունի վէպը։ Անոր հերոսները բազմա-  
թիւ են, բազնազան՝ այնքան ու ինչ-  
պէս ընթերցողները կրնան ըլլալ։

Վէպը չունի նաեւ աշխարհագ-  
րական յատուկ տարածք։ Ան տեղի  
կ'ունենայ ամենուրեք՝ աշխարհի վրայ  
ամեն տեղ, որեւէ տեղ։ Տակաւին անոր  
թաւալման ժամանակն ալ շատ ընդար-  
ձակ է, հարիւր տարի՝ ինչպէս Կարսիա  
Մարքէզի հարիւր տարուան մենու-  
թիւնը, կամ հազար տարի։

Ընթերցողը ի՞նք կ'ընտրէ այն  
պահը, որմէ կ'ուգէ սկսիլ կարդալ վէպը,  
ու պահը, ուր կ'ուգէ յանգիլ՝ դէպի  
առաջ կամ դէպի ետ։ Ան կրնայ ընտրել  
իր ծննդեան թուականը ու անկէ մեկ-  
նելով հասնիլ 2015 թուականին կամ  
բռնել հակառակ ճանապարհը ու  
հանգրուանել 1915 թուականին՝ եթէ  
հայ է...։ Կրնայ եւ ընտրել իր ծննդա-  
փայրը ու անկէ անցնիլ մէկ երկրէն  
միւսը, անընդհատ տեղափոխուելով։

Վէպը կարդալու միակ ձեւը այս  
չէ սակայն, այսինքն՝ հորիզոնական  
ընթացքով։ Ընթերցողը կրնայ մնալ իր  
տեղը, իր ժամանակին վրայ ու վէպը  
կարդալ դէպի վեր՝ ամպերն ու երազնե-  
րը կամ դէպի վար՝ խորքերը իր ինք-  
նութեան։ Կարեւորը, սակայն, ինչ ձե-  
ռով ալ որոշէ կարդալ՝ հորիզոնական թէ  
ուղղաձիգ, ընթերցողը պարտաւոր է

ընարել իր հերոսը ու անոր հետ կտրել  
ընթերցման ճանապարհը։

Ան՝ հերոսը, կրնայ իր ազգէն ըլ-  
լալ կամ ոչ, «հայ» թէ «օտար», «բա-  
րի» կամ «չար», ամուսնացած կամ  
ամուրի, հաւատացեալ կամ անհաւատ,  
ճարպիկ կամ անճարակ, ուսեալ կամ  
տգէտ, բարոյականի տէր կամ անբարոյ,  
հանրանուէր կամ եսակեդրոն, օրինա-  
պահ կամ օրինախախտ, հարուստ կամ  
աղքատ, բարեսիրտ կամ անգութ, հե-  
զահամբոյր կամ վայրագ, նիւթապաշտ  
կամ գաղափարապաշտ։ Այսինքն՝ ինձի  
պէս, քեզի պէս մէկը։

Տուեալ պահուն ան կրնայ ճակա-  
տի խրամատներուն մէջ ըլլալ՝ հայրե-  
նիքի պաշպանութեան ի խնդիր, խա-  
ղատունը՝ իր չունեցածն ալ կորսնցնե-  
լու վրայ, մարդկային իրաւունքներու  
պաշտպանութեան համար փողոց իջած՝  
ցոյցի, կամ սեփական կինը լքած՝ սի-  
րուհիին թեւերու տարփանքին յանձն-  
ուած, աղէտի վայրը՝ բուժօգնութիւն  
հացնելու համար աղէտեալներու,  
բանափի խուցին մէջ՝ գործած ոճիրին  
պատիքը կրելու համար, երկար ճանա-  
պարի վրայ՝ բեռնատարի դեկին ետեւ՝  
աչքերուն իջնող քունին դէմ պայքա-  
րելու մէջ, կամ ապրանքը ծախած  
ատեն՝ թէ յաճախորդը եւ թէ՛ պետու-  
թիւնը խաբելու ընթացքի մէջ, դասար-  
անին մէջ՝ մայրենի լեզու դասաւան-  
դելու հրայրքին մէջ, թէ նոյն այդ ու-  
սուցիչին դէմ՝ զաւկին դիտողութիւն  
ըրած ըլլալուն համար՝ տնօրէնին բողո-  
քած պահուն։ Այսինքն ընթերցողը  
կրնայ գտնուիլ իր հերոսին որեւէ  
արարքին մէջ, որ ինքն ալ կրնայ կա-  
տարած կամ կատարելու վրայ ըլլալ։

Բայց միեւնոյն ատեն, եթէ ըն-  
թերցումը ուղղաձիգ ըլլայ, ընթերցողը  
կրնայ իջնել հերոսին հոգիին խորերը,  
